

# Միջազգային իրավունքի զարգացման հեռանկարները համաճարակի ժամանակահատվածում

Չալստյան Ն. Ա.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ (Երևան, Հայաստան)  
naregal2tyan@gmail.com

**Վճռորոշ բառեր՝** միջազգային իրավունք, համաճարակ, Մարդու իրավունքների միջազգային իրավունք, միջազգային պատասխանատվություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), COVID-19

## Перспективы развития международного права в период эпидемии

Галстян Н. А.

Аспирантка Российско-Армянского (Славянского) университета (Ереван, Армения)  
naregal2tyan@gmail.com

**Аннотация:** Данная научная статья посвящена изучению происхождения международного права, этапов его развития, а также перспектив его развития в период эпидемии. В статье автор изучает и анализирует, какие международно-правовые нормы регулируют межгосударственные отношения в период эпидемий, какая ответственность может быть применена в случае ненадлежащего осведомления об опасности распространения эпидемии и какие нормы международного права прав человека могут быть нарушены в этот период. Цель данной статьи – попытаться объективно выявить существующие проблемы и найти варианты их решения.

**Ключевые слова:** международное право, эпидемия, международное право прав человека, международная ответственность, Всемирная организация здравоохранения (ВОЗ), COVID-19.

## Prospects for the development of international law during the epidemic

Galstyan N. A.

PhD student in Russian-Armenian (Slavonic) university (Yerevan, Armenia)  
naregal2tyan@gmail.com

**Abstract:** This scientific article is devoted to etymology of International Law, its development stages and perspective research of its development during epidemic. In the article author explores and analyses what international legal norms there are in times of pandemics for regulating international relations, what liabilities can be applied if not duly informed about dangers of spread of pandemic and what norms of international human rights law might be violated during that. The aim of this article is to try to objectively raise existing issues and find solutions for them.

**Keywords:** international law, pandemic, international human rights law, international liability, world health organization (WHO), COVID-19.

Միջազգային իրավունքը զարգանում է մարդկության պատմության ողջ ընթացքում և այն միշտ կրելու է շարունակական բնույթ: Միջազգային իրավունքը միտված է կարգավորելու միջպետական հարաբերությունները, ապահովելու պետությունների համագործակցությունը և վերջիններիս միջև առաջացած խնդիրների խաղաղ կարգավորումը:

Վերջին տարիներին տեղի ունեցող միջազգային հարաբերությունների համակարգի վերափոխումը առիթ է տալիս մտածելու միջազգային իրավունքի հետագա զարգացման հեռանկարների մասին: Միջազգային իրավունքի ապագան հուզում է բազմաթիվ մասնագետների [1; 2; 3]: Արդյո՞ք միջազգային իրավունքը գլոբալացվող աշխարհում

կպահպանի ակտիվ կարգավորող գործառույթը: Կա արդյո՞ք այլընտրանք միջազգային իրավունքին: Անհրաժեշտ է արդյո՞ք միջազգային իրավունքի նորմերի գոյություն ունեցող համակարգում լուրջ փոփոխություններ կատարել: Ժամանակակից միջազգային իրավունքի այս և շատ այլ արդիական հարցերի պատասխանների որոնմամբ զբաղվում են մի շարք գիտնականներ:

Ժամանակակից միջազգային իրավունքի կայացման հիմք է հանդիսացել ՄԱԿի կանոնադրությունը, որն իր հետ բերել է նոր մտածողություն՝ առաջնորդվելով փոխօգնության սկզբունքով: Դարակազմիկ նշանակություն ունեցավ այն փաստը, որ միջազգային իրավունքը սկսեց կրել հակապատերազմական

բնույթ: Աճում էր միջազգային պայմանագրերի նշանադրությունը, մարդու իրավունքները ճանաչվեցին միջպետական համագործակցության հիմնաքար:

Միջազգային իրավունքը անվերջ զարգացող նորմերի համակարգ է, որը պարբերաբար կարիք ունի ենթարկվելու փոփոխությունների տվյալ պահին աշխարհում առկա իրավիճակին համապատասխան: Մեր օրերում ակտիվ քննարկվում է ՄԱԿ-ի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու հարցը: Այս մոտեցման կողմնակիցները հիմնավորում են նման մոտեցումը նրանով, որ առավել կարևոր հարցերի շուրջ Անվտանգության Խորհուրդը չունի միանաման մոտեցում և չի կարող կայացնել որոշումներ: Հետևաբար բացակայում է այն արդյունավետ մեխանիզմը, որի շրջանակներում պետությունները կկարողանային խորհրդակցել և համագործակցել կարևոր խնդիրների լուծման և կարգավորման հարցում:

Ինչպես նշել է Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆ. Մոզերինին. «Միջազգային իրավունքը և բազմակողմ համաձայնագրերը ավելի ու ավելի են ընկալվում ուժեղ (խաղացողների) կողմից որպես խոչընդոտ, այլ ոչ թե որպես երաշխիք բոլորի համար...» [7]:

Այս կապակցությամբ տեղին է ցիտել Ա. Խ. Աբաշիձեի խոսքերը.

«Ակնհայտ է, որ ժամանակակից միջազգային իրավունքի դերը՝ որպես միջազգային հարաբերությունների կարգավորողի և միջազգային տարաձայնությունների և հակամարտությունների կարգավորման միջոցի մեծապես պայմանավորված է նրանով, թե միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտները՝ ինքնիշխան պետությունները, ինչպես նաև դրանց ղեկավարները, գիտակցում են արդյոք, թե ինչ աշխարհում ենք մենք ապրում: Եվ ավելին, թե որքանով են նրանք պատրաստ համատեղ գործել ընդհանուր սպառնալիքներին դիմակայելու և ընդհանուր շահերի ապահովման ոլորտում» [1; 7]:

Միջազգային իրավունքի դերը հատկապես առաջնային է դառնում ճգնաժամային իրավիճակներում, երբ պետությունների հա-

մար փոխօգնությունն ու համագործակցությունը ձեռք են բերում կենսական նշանակություն, երբ դրանք կարիք ունեն կոնկրետ կարգավորման և ուղղված են մարդկության խաղաղության և անվտանգության պահպանմանը: Այսօր աշխարհին պատած համաճարակային աղետը՝ Covid-19, մարդկությանը կանգնեցրել է նոր ճգնաժամի առջև:

Հիվանդությունների անդրսահմանային տարածման դեմ պայքարի միջազգային կանոնների ստեղծման առաջին փորձերը սկսվել են 1851 թվականից, երբ եվրոպացի քաղաքական գործիչների և համաճարակաբանների խումբն առաջին անգամ Փարիզում հավաքվեց երրորդ խաղաղության համաճարակի կապակցությամբ (1846-1860): Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեց Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): Այսօր այն ունի անմիջական մանդատ համաճարակի դեմ պայքարի ոլորտում:

Ի տարբերություն այլ միջազգային կազմակերպությունների, ԱՀԿ-ն լայն լիազորություններ ունի: Այսպես, ԱՀԿ-ի կանոնադրության համաձայն՝ կազմակերպությունն իրավունք ունի ընդունելու նորմատիվ ակտեր, որոնք պարտադիր են բոլոր անդամ պետությունների համար՝ առանց վավերացման ընթացակարգի՝ արժանանալով խորհրդարանի հավանությանը: Մաքս Պլանկի ինստիտուտի հետազոտողներ Արմին ֆոն Բոգդանտիի եւ Պեդրո Վիլառեալեի կարծիքով՝ ԱՀԿ-ի նորմատիվ ակտերի նման առանձնահատկությունն ի սկզբանե պայմանավորված էր կազմակերպության որոշումների տեխնոկրատական և ոչ քաղաքականացված բնույթի նկատմամբ պետությունների հավատով [5]:

Միևնույն ժամանակ, այդ ակտերի նման առանձնահատկությունը նշանակում է կազմակերպության աննախադեպ պատասխանատվություն: COVID-19 համաճարակի քաղաքականացման լույսի ներքո հեշտ չէ կորոնավիրուսի դեմ պայքարում առաջատար լինել: Սակայն հենց նրա "ձեռքերում" է հիվանդությունների բռնկումների կարգավորման ոլորտում միջազգային – իրավական կարևորագույն գործիքը՝ 2005 թվականի միջազգային բժշկասանիտարական կանոնները, որոնք տարածվում են ԱՀԿ-ի անդամ 194 պետությո-

յունների վրա՝ գումարած Լիխտենշտեյնն ու Վատիկանը:

ԱՀԿ կանոնադրության առանցքային կանոններից է անդամ պետությունների և ԱՀԿ քարտուղարության միջև տեղեկատվության փոխանակումը: Նրանք պարտավորեցնում են պետություններին 24 ժամվա ընթացքում տեղեկացնել կազմակերպությանը "բոլոր այն իրադարձությունների մասին, որոնք կարող են միջազգային նշանակություն ունեցող հանրային առողջապահության արտակարգ իրավիճակ ստեղծել՝ հաշվի առնելով այն իրավիճակը, որտեղ տեղի են ունենում այդ իրադարձությունները": Հենց կանոնների 6-րդ հոդվածի հիման վրա է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Չինաստանին մեղադրում պանդեմիայի սկզբնական փուլերը թաքցնելու մեջ: Քաղաքական ասպեկտից դուրս, եթե ԱՄՆ-ը կամ այլ պետություններ դիմեն ՄԱԿ-ի Միջազգային դատարան և Չինաստանի մեղքը ապացուցվի, Չինաստանը կենթարկվի միջազգային իրավական պատասխանատվության:

Միջազգային իրավական պատասխանատվությունը՝ միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից միջազգային իրավական պարտավորության խախտման արդյունքում միջազգային իրավունքի մեկ այլ սուբյեկտին հասցված վնասը վերացնելու պարտականությունն է [4]: Հետևաբար, եթե ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից հայցը բավարարվի, ապա Ճինաստանը պարտավոր կլինի հայցվորներին փոխհատուցել դատարանի կողմից սահմանված վնասները: Սակայն Ճինաստանին պատասխանատվության ենթարկելը մեկն է այն բազում խնդիրներից, որոնք առաջ եկան վիրուսի տարածումից հետո: Շատ պետություններ, միտում ունեն ստեղծված իրավիճակը ծառայացնել սահմանափակելու մի շարք մարդու իրավունքներ, այսպիսով խախտելով Մարդու իրավունքների միջազգային իրավունքի մի շարք նորմեր:

Անտիկ ժամանակներում, երբ "կորոնավիրուս" բառը դեռ ոչ ոք չգիտեր, «իրավունքի գերակայության» սկզբունքը (rule of law) առաջացավ որպես տիրակալների իշխանության հակակրանք (rule of men): Հիվանդության դեմ պայքարը ենթադրում է մարդու իրավունքների սահմանափակում: Միջազգային իրավական դաշտում

պետության կողմից Մարդու իրավունքների պաշտպանության իր պարտավորություններից նահանջը հնարավոր է քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածին համապատասխան: Այսպես, արտակարգ դրության ժամանակ իր պարտավորություններից նահանջող պետությունը պետք է տեղեկացնի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ վկայակոչելով ԱՀԿ-ի կարծիքը:

Վենետիկի հանձնաժողովի կողմից հրատարակված իրավունքի գերակայության տարրերի վերահսկողական ցանկի համաձայն՝ հասկացությունը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ՝ սկսած օրենքների ընդունման թափանցիկ գործընթացից, իրավական նորմերի հստակությունից, վերջացրած պետության կողմից մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում առանցքային կոնվենցիաների պահպանմամբ [6]:

Վերոնշյալ ցանկը սահմանում է նաև մի շարք չափանիշներ արտակարգ իրավիճակներում իրավունքի գերակայության սկզբունքի պահպանման գնահատման համար:

- Կան արդյոք հատուկ ազգային դրույթներ, որոնք կիրառելի են արտակարգ իրավիճակների համար: Նման իրավիճակներում արդյոք մարդու իրավունքներից շեղումներ հնարավոր են: Ինչ հանգամանքներ կամ չափանիշներ են անհրաժեշտ բացառության կիրառման համար
- Արդյոք ազգային իրավունքն արգելում է շեղումներ կատարել որոշ իրավունքներից նույնիսկ արտակարգ իրավիճակներում: Արդյոք շեղումները համաչափ են :
- Որն է արտակարգ իրավիճակի որոշման կարգը: Կա արդյոք խորհրդարանական վերահսկողություն և դատական վերանայում արտակարգ իրավիճակի և համապատասխան շեղման գոյության և տևողության վերաբերյալ:

Շատ երկրներում բացակայում են վերոնշյալ չափանիշների պահպանումը, ինչպես նաև արտակարգ դրություն մտցնելու կարգը, ժամկետները և պայմանները սահմանող իրավական դրույթները: Վերջինս չի սահմանափակում պետություններին՝ առանց արտա-

կարգ դրության ռեժիմի, կարանտինի կոշտ մոդելի ներդրումը: Վերջինս հակասում է իրավունքի գերակայության սկզբունքին և կարող է հանգեցնել գործադիր իշխանության կողմից բոլոր լիազորությունների յուրացմանը: Հարկ է նշել, որ համատարած զանգվածային կարանտինները նոր երևույթ են, որն ուղղակիորեն նախատեսված չէ միջազգային բժշկասանիտարական կանոններով: Հետևաբար, կարանտինի հետ կապված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հնարավոր դատական որոշումները զգալիորեն կարող են տարբերվել՝ կախված սահմանափակումներից, կոնկրետ անձի կյանքի վրա դրանց ազդեցությունից և հիվանդացության համատեքստից:

Պանդեմիան և դրա դեմ պայքարի աննախադեպ միջոցները ցույց են տալիս բազմաթիվ իրավական անկատարություններ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակով: Դա և հատուկ իրավական ռեժիմից դուրս արտակարգ դրության դե-ֆակտո ներդրման հնարավորությունն է, և պանդեմիայի ժամանակ իշխանության բռնազավթման դեպքում պետության վրա ազդեցության միջազգային մեխանիզմների բացակայությունը, և անորոշ ժամանակով կարանտինում իր պետության սահմաններից դուրս "խրված" անձանց իրավական կարգավիճակը որոշելիս դժվարությունները: Հետագայում այդ փորձը կարող է օգտագործվել պետությունների կողմից հա-

մաճարակի ժամանակ իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների պահպանման ավելի մանրամասն կանոնների մշակման համար:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Абашидзе А. Х.** «Сохранит ли международное право активную регулируемую функцию в глобализирующемся мире?», Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 4-16.
2. **Бекяшев К. А.** «Необходимо ли внесение серьезных изменений в существующую систему норм международного права?» Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 17-47.
3. **Капустин А. Я.** «Право международных организаций: перспективы развития в XXI веке»/ Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 139-150
4. **Батычко В. Т.**, «Международное право, Конспект лекций. Таганрог: ТТИ ЮФУ, 2011»
5. **Von Bondandy, A., Villarel, P.** (2020). International Law on Pandemic Response: A First Stocktaking in Light of the Coronavirus Crisis. MPHIL Research Paper Series No 2020/7
6. <https://www.prostranstvo.media/prava-cheloveka-v-jekstremalnoj-situacii-kak-koronavirus-ispityvaet-na-prochnost-demokratiju/>
7. <https://news.mail.ru/politics/36410978/?frommail=1>

*Տճանաչվել է՝ 01.09.2020  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 03.09.2020  
 Принята/Ընդունվել է՝ 04.09.2020*